ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2023 թվականի № ----Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ Որոշման №2 հավելվածով սահմանված ձևին համապատասխան հաշվետվությունը Հանձնաժողով է ներկայացվում տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանը Որոշման №2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 2-րդ կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի հունվարի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետից հետո,

գ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանի նկատմամբ 2023 թվականի հուլիսի 13-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 13-ի №ԳԲ/34.2-Մ2-7/2338-2023 գրությամբ,

դ) անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանը վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 19-ի գրությամբ հայտնել է, որ սույն թվականի հունվարի 30-ին psrcinfo@psrc.am էլեկտրոնային հասցեով ուղարկել է խնդրո առարկա Հաշվետվությունը, իսկ Հանձնաժողովից հեռախոսազանգով

տեղեկանալուց հետո, սույն թվականի հունվարի 31-ին նշված էլեկտրոնային հասցեով ուղարկել է Հաշվետվությունը և ուղեկցող գրությունը,

ե) Որոշմամբ հաստատված №1 հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող կարգավորվող անձինք հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացնում առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունները ներկայացվում են փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry), էլեկտրոնային փոստի կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային փոստով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջն, այն է՝ Հաշվետվությունը (և ուղեկցող գրությունը) Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի հունվարի 31-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետից հետո: Ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանի ներկայացրած դիտարկումներին՝ ապա պետք է նշել, որ վերջինս Որոշմամբ սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով Հանձնաժողով է ներկայացրել Հաշվետվություն՝ առանց ուղեկցող գրության, մինչդեռ, Որոշման պահանջների համաձայն՝ հաշվետվությունները էլեկտրոնային փոստով Հանձնաժողով ներկայացման դեպքում՝ հաշվետվությունների ներկայացման օր է համարվում հաշվետվությունների և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, ինչը վերջինիս կողմից իրականացվել է Որոշմամբ սահմանված ժամկետից հետո, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Դավիթ Խաչատրյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2023թ